

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2021 թվականի  
ապրիլի 8-ի N 531-Լ որոշման

**Ց Ա Ն Կ**  
**ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

| Նպատակ 1. Կառուցապատման թույլտվությունների համակարգերի կանոնակարգում և պարզեցում<br>Խնդիր. Վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման կարգերի վերանայում |  |   |                           |  |  |   |
|---|--|---|---------------------------|--|--|---|
| Հ/Հ   | Միջոցառում   | Ակնկալվող անմիջական արդյունք  | Պատասխանատու մարմին(ներ)  | Համակատարող մարմին(ներ)  | Վերջնաժամկետ                             | Ֆինանսավորում   |
| 1.  | 1.1. Կառուցապատման թույլտվությունների տրամադրման գործառնությունների զգալի մասը իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ e-permits միասնական համակարգի միջոցով, դիտարկելով այն որպես էլեկտրոնային մեկ հարթակ, որտեղ կգործեն ընթացակարգին մասնակից բոլոր մարմինները և կազմակերպությունները | Կառուցապատման թույլտվությունների տրամադրման ռացիոնալ, արագ և թափանցիկ, միաժամանակյա համաձայնեցումներ ստանալու և թվային միջավայրում բացվող բազմաթիվ այլ հնարավորություններ | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | 2021թթ. (կիսամյակային հաշվետվություններ) | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա:<br><br>Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ<br><br>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

|   |   |   |                                  |   |  |   |
|---|---|---|----------------------------------|---|--|---|
| <p>Նպատակ 2. Քաղաքաշինական կայուն զարգացում. ներդաշնակ կենսամիջավայրի ձևավորում և նպաստում բնակչության տարածքային համաչափ բաշխվածությանը. ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ստեղծում. ազգային արժեքների և ավանդույթների, հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման և դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում. անկառավարելի ուրբանիզացման հնարավոր սպառնալիքների չեզոքացում. Խնդիր. Տարածական պլանավորման բազմակենտրոն զարգացման սկզբունքների ներդրում</p> |   |   |                                  |   |  |   |
| 2.  | <p>2.1.1. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում</p> <p>2.1.2. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի մշակում</p> | <p>Երկրի կայուն տարածական զարգացման ռազմավարության մշակում և իրագործում՝ սոցիալ-տնտեսական գործոնների, ինժեներատրանսպորտային, բնական պայմանների ու պաշարների, էկոլոգիական իրավիճակի, մշակութային ժառանգության, աշխարհագրական ու տարածաշրջանային այլ առանձնահատկությունների հաշվառմամբ: Օրենքով սահմանված պարտադիր մշակման ենթակա փաստաթղթի հաստատում, որպես ազգային մակարդակով պետական քաղաքաշինական քաղաքականության իրականացման հիմք:</p> | <p>ՀՀ քաղաքաշինության կոմիտե</p> | <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p>   | <p>2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>2025-2027թթ. (կիսամյակային հաշվետվություններ)</p> | <p>2024 թվական՝ ֆինանսավորում չի պահանջվում</p> <p>2025-2027 թվականների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա:</p> <p>Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ</p> <p>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p> |
| 3.  | <p>2.2. ՀՀ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծերի մշակում</p>                                  | <p>Տարածքային մակարդակում պետական քաղաքաշինական քաղաքականության իրագործման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում.</p> <p>քաղաքաշինական զարգացման գերակայությունների ամրագրում՝ առանձին տարածքային միավորների շահերի հաշվառումով և տնտեսության ճյուղային ծրագրերի ինտեգրումով.</p> <p>համայնքների ընդհանրական շահերին առնչվող ինժեներատրանսպորտային, կոմունալ ենթակառուցվածքների և այլ խնդիրների</p>  | <p>ՀՀ քաղաքաշինության կոմիտե</p> | <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Համապատասխան մարզպետարաններ</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)</p> | <p>2023թթ. (կիսամյակային հաշվետվություններ)</p>  | <p>ՀՀ պետական բյուջե Համաձայն ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հաստատված չափաքանակների:</p>   |

|  |  |   |  |  |  |  |
|--|--|---|--|--|--|--|
|  |  | <p>կարգավորման համալիր, փոխկապակցված լուծումների ամրագրում.</p> <p>բնակավայրերի ցանցի, տարածաշրջանային զարգացման առկա անհամամասնությունների հաղթահարման, բազմակենտրոն տարածական զարգացման նախադրյալների ստեղծում.</p> <p>Հայաստանի մարզերի տարածքային զարգացման ծրագրերի իրագործման արդյունավետության և ամբողջականության ապահովում.</p> <p>Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական գործունեության կարգավորում ու հստակեցում. տարածքների բազմագործոն գնահատման արդյունքում կառուցապատման հուսալիության ապահովում.</p> <p>մարդկանց համար առողջ, անվտանգ և հարմար կենսամիջավայրերի ստեղծում.</p> <p>պլանավորման փաստաթղթերի դրույթներին համապատասխան կառուցապատման ընթացակարգերին առնչվող թույլտվական գործառույթների (հողամասերի տրամադրում, շինթույլտվություն և այլն) իրականացման թափանցիկության ապահովում, սուբյեկտիվ որոշումների բացառում, բյուրոկրատական կամայականությունների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում.</p> <p>գործարար միջավայրի բարելավում և ներդրումների ներգրավման խթանում.</p> |  |  |  |  |
|--|--|---|--|--|--|--|

|    |  |  |                           |   |   |   |
|----|--|--|---------------------------|---|---|---|
| 4. | 2.3. «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակում  | Սևանա լճի ափամերձ տարածքների, որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտի քաղաքաշինական գործունեության կանոնակարգմանը նպատակաուղղված միջոցառումների սահմանում.<br>տարածքների քաղաքաշինական-տնտեսական կազմակերպման, բնական ու մշակութային լանդշաֆտների պահպանության, ռեկրեացիոն պոտենցիալի կայուն օգտագործման խնդիրների փոխկապակցված լուծում՝ օրենսդրությամբ սահմանված լճի բարձրացման հետևանքով Սևանա լճի էկոտոնի սահմանների փոփոխությունների հաշվառմամբ. | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն<br><br>«Սևան» ազգային պարկ | 2021 թվականի մայիսի 2-րդ տասնօրյակ          | Անհրաժեշտ 43 000.0 հազ. դրամը հատկացվել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:   |
| 5. | 2.4. Երևան քաղաքի մուտքերին հարող միջպետական և հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհների կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների մշակում | ՀՀ պետական ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության ապահովում.<br>դրանց հարող տարածքների՝ որպես հատուկ կարգավորման քաղաքաշինական օբյեկտների կառուցապատման կանոնակարգում.   | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  | 2025թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա:<br><br>Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ<br><br>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

|  |  |   |                           |   |   |                              |
|--|--|---|---------------------------|---|---|------------------------------|
| 6.   | 2.6. Քաղաքաշինական և տարածական պլանավորման ոլորտում կարողությունների զարգացման համար տեղական համայնքներին տեխնիկական խորհրդատվության և օժանդակության տրամադրում  | Տարածական պլանավորման փաստաթղթերի իրականացման արդյունավետության բարձրացում  | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  | 2023թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 7.   | 2.5. Առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի շենքային պայմանների գույքագրում, ինչպես նաև վերանորոգման, վերակառուցման, օտարման նպատակահարմարության, նոր շենքերի կառուցման կարիքի գնահատում, հանրապետության համար կազմել բժշկական, սոցիալական և կրթական հաստատությունների տեղակայման նախընտրելի քարտեզ | Նմանատիպ քարտեզի առկայությունը կօգնի՝ համադրելով առկա շենքային ռեսուրսները, գնահատել շինարարության պահանջարկը՝ ըստ ոլորտների, ինչպես նաև պլանավորել այդ աշխատանքները: | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության<br>ՀՀ<br>առողջապահության նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 2026թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| Նպատակ 3. Պատմաճարտարապետական և բնական ժառանգության պահպանություն, վերականգնում, խնայողական օգտագործում Խնդիր. Ոլորտը կարգավորող մեթոդաբանության, ուղեցույցի և ռազմավարական փաստաթղթի մշակման անհրաժեշտություն |  |   |                           |   |   |                              |

|    |   |   |                           |  |   |  |
|----|---|---|---------------------------|--|---|--|
| 8. | <p>3.1. Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության քաղաքաշինական ռեաբիլիտացիայի ծրագրերին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում</p> <p>3.1.1 Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության քաղաքաշինական ռեաբիլիտացիայի ծրագրերի նախագծի առաջադրանքի մշակում</p> <p>3.1.2 Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության քաղաքաշինական ռեաբիլիտացիայի ծրագրերի նախագծի ձեռքբերում</p> | <p>Ճարտարապետական ժառանգության ու քաղաքների պատմամշակութային միջավայրերի պահպանություն և վերագարգացում.<br/>ազգային արժեքների և ավանդույթների, հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանում, դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում.<br/>որպես օրինակելի մոդելներ՝ Գյումրի, Գորիս և Աշտարակ քաղաքների ինքնատիպության, գրավչության բարձրացմանն ուղղված ծրագրային միջոցառումների մշակում.<br/>պատմական քաղաքների կառավարման և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը (պատմական շենքերի սեփականատերերի հետ պահպանման պայմանագրերի կնքման գործընթացում քաղաքաշինության ինքնության պահպանման բաղադրիչի ներդրում՝ արտոնությունների և պատասխանատվությունների սահմանմամբ), մարդկանց բարեկեցության և զբոսաշրջային գրավչության բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը նպատակաուղղված ծրագրերի մշակում</p> | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | <p>2025-2026թթ.,<br/>(կիսամյակային հաշվետվություններ)</p> <p>2026-2027թթ.,<br/>(կիսամյակային հաշվետվություններ)</p> <p>2027-2028թթ.,<br/>(կիսամյակային հաշվետվություններ)</p> | <p>Ֆինանսավորում չի պահանջվում:</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում:</p> <p>Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա:</p> <p>Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ</p> <p>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p> |
|----|---|---|---------------------------|--|---|--|

|     |  |  |                           |                                     |   |  |
|-----|--|--|---------------------------|-------------------------------------|---|--|
| 9.  | <p>3.2.1. ՀՀ զբոսաշրջային համակարգի տարածքային կազմակերպման գլխավոր նախագիծը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում</p> <p>3.2.2. ՀՀ զբոսաշրջային համակարգի տարածքային կազմակերպման գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում</p> <p>3.2.3. ՀՀ զբոսաշրջային համակարգի տարածքային կազմակերպման գլխավոր նախագծի ձեռք բերում</p> | <p>Ոլորտին առնչվող դրոշումների հետ համաձայնեցված ՀՀ զբոսաշրջային համակարգի ձևավորման համար ենթակառուցվածքի տարածքային կազմակերպման նախագծին անհրաժեշտ դրույթների ամրագրում:</p> <p>Հայաստանի զբոսաշրջային ռեսուրսների և ներուժի համալիր գնահատման և գույքագրման հենքի վրա խնայողական օգտագործմանը միտված միասնական փոխկապակցված զբոսաշրջային գոտիների տեղաբաշխման, զբոսաշրջային համակարգի կազմակերպման ուրվագծերի մշակում:</p> <p>Տարածական պլանավորման փաստաթղթերում զբոսաշրջային ենթակառուցվածքի կազմակերպմանն ու զարգացմանը միտված հայեցակարգային դրույթների ամրագրում, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, տարածական կազմակերպման առաջադրում:</p> <p>Բնության հատուկ պահպանվող տարածքներում խնայողական զբոսաշրջության հարաչափերի առաջադրում:</p> | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն       | <p>2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>2025<br/>(կիսամյակային հաշվետվություններ)</p> <p>2026- 2027թթ.,<br/>(կիսամյակային հաշվետվություններ)</p> | <p>Ֆինանսավորում չի պահանջվում:</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում:</p> <p>Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա:</p> <p>Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ</p> <p>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p> |
| 10. | 3.3. Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործումը Հայաստանում   | <p>Միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիան 2004թ. մարտի 9-ին) կատարման շրջանակներում՝ լանդշաֆտի պահպանության, կառավարման և պլանավորման գործընթացների հետևողական իրագործում.</p>  | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ շրջական միջավայրի նախարարություն | 2025թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ)   | Ֆինանսավորում չի պահանջվում  |

|  |   |  |                                  |   |   |  |
|--|---|--|----------------------------------|---|---|--|
|  |   | <p>հասարակական կարծիքի, տնտեսական գործունեության և շրջակա միջավայրի միջև համաչափ և ներդաշնակ փոխազդեցությունների վրա հիմնված կայուն զարգացման ապահովում, եվրոպական կառույցներին ինտեգրում՝ անդամ երկրների կողմից որդեգրված սկզբունքներին և չափանիշներին համապատասխան ռազմավարության ձևավորում:</p>   |                                  |   |   |  |
| <p>Նպատակ 4. Քաղաքաշինական ոլորտի գործընթացների կանոնակարգում, դյուրինացում ու գործառնության արդյունավետության բարձրացում, Խնդիր. Տեղեկատվական միասնական հասանելի հարթակի ստեղծում</p> |   |  |                                  |   |   |  |
| 11.  | <p>4.1. Պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ներդրման ծրագրի իրագործում</p> | <p>Տեխնիկական և ծրագրային ապահովում, նախատեսվող համակարգի վարման մեթոդաբանության մշակում և կադրային նախապատրաստում հանրապետության ողջ տարածքում պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ստեղծում՝ քաղաքաշինական գործունեության օբյեկտների, տարածական պլանավորման, քաղաքաշինական նորմերի, սահմանափակումների, ինչպես նաև ինժեներատեխնիկական, սեյսմիկ իրադրության, քաղաքաշինական գործունեության վրա ազդող այլ գործոնների վերաբերյալ համալիր և ստույգ տեղեկությունների ներառմամբ. իրավական, նորմատիվատեխնիկական, ծրագրատեխնոլոգիական և մեթոդական միասնական հիմքի ապահովում և գործնական ներդրում. բազային և քաղաքաշինական երկրատեղեկատվական համակարգերի միասնականության և տվյալների փոխանակման համակարգի ստեղծում.</p> | <p>ՀՀ քաղաքաշինության կոմիտե</p> | <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>ՀՀ կադաստրի կոմիտե</p> | <p>2025-2026թթ., (կիսամյակային հաշվետվություններ)</p> | <p>Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա:</p> <p>Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ</p> <p>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p> |



|   |  |   |                           |   |   |                              |
|---|--|---|---------------------------|---|---|------------------------------|
|   | 4.2. Նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության գործառնությունների քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների վերանայման վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի ներկայացում | Նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության գործառնությունների իրականացման որակի բարձրացման համար իրավական նախադրյալների ստեղծում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե |   | 2021թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| Նպատակ 5. Տարածքային ռեսուրսների խնայողական օգտագործում, առողջ կենսամիջավայրի ձևավորում<br>Խնդիր. ՀՀ բնակավայրերի տարածքներում առկա նախկին արդյունաբերական տարածքների լիարժեք, արդյունավետ օգտագործման անհրաժեշտություն |  |   |                           |   |   |                              |
| 12.   | 5.1. ՀՀ բնակավայրերում արդյունաբերական տարածքների գույքագրում, հարմարեցված օգտագործման հայեցակարգի մշակում   | Ներդրումային ծրագրերի իրականացման համար ներքին պահուստների ի հայտ բերում բնակավայրերի հատակագծային կառուցվածքում լքված տարածքների վերաօգտագործում             | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | 2025թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| Նպատակ 6. Քաղաքաշինական օրենսդրական դաշտի արդիականացում<br>Խնդիր. Միջազգային օրենսդրությամբ համապատասխան իրավական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի բազայի ստեղծում   |  |   |                           |   |   |                              |
| 13.   | 6.1. Ոլորտի օրենսդրական բազայի կատարելագործում՝ օրենսդրական և ենթաօրենսդրական  | Քաղաքաշինության բնագավառում կառավարման գործառնությունների արդյունավետության բարձրացում, միջազգայնորեն ընդունված սկզբունքներին                                 | ՀՀ քաղաքաշինության կոմիտե |   | 2022թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում: |

|  |  |   |                           |  |  |   |
|--|--|---|---------------------------|--|--|---|
|  | ակտերի ընդունման միջոցով   | ներդաշնակեցված իրավական դաշտի կազմավորում.  |                           |  |  |   |
| 14.  | 6.2. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ իրավական փաստաթղթերի համակարգի բարեփոխում՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում լիազորող նորմի սահմանում և դրա հիման վրա ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանների ընդունում | Մարդկանց կյանքի, անվտանգության, քաղաքաշինական համակարգերի հուսալիության և կայունության ապահովմանը, բնակչության սակավաշարժուն խմբերի համար անարգել միջավայրի ձևավորմանը նպատակատուղված՝ քաղաքաշինության բնագավառը կարգավորող, միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համահունչ նորմատիվ իրավական փաստաթղթերի դաշտի՝ մրցութային կարգով ձեռնարկների, ստանդարտների մշակման աշխատանքների ձեռքբերում                             | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ աշխատանքի, սոցիալական հարցերի նախարարություն            | 2021թ., (կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում:                                  |
| Նպատակ 7. Ծախսային ծրագրերի արդյունավետության գնահատում<br>Խնդիր. Ներդրումների առավել նպատակային ուղղորդում  |  |   |                           |  |  |   |
| 15.  | 7.1. Ռազմավարական ծրագրերի նպատակայնության արդյունավետության գնահատմանն ուղղված չափորոշիչների համակարգի մշակում՝ ծրագրերի իրականացման բոլոր փուլերում  | Համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերի առաջնահերթություններին.<br><ul style="list-style-type: none"> <li>Ազդեցությունը սոցիալական խնդիրների լուծմանը, աշխատատեղերի ստեղծմանը</li> <li>Նպաստելը շրջակա միջավայրի պահանջության և պատմաճարտարապետական ժառանգության պահպանության խնդիրների լուծմանը</li> <li>Իրականացվող ծրագրերի նկատմամբ վերահսկողության և մշտադիտարկման իրականացումը</li> </ul> | ՀՀ քաղաքաշինության կոմիտե |  | 2023թ., (կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում:                                  |
| Նպատակ 8. Մշակութային կյանքի ապակենտրոնացում, միջազգային կապերի ընդլայնում, ճանաչելիության բարձրացում<br>Խնդիր. Առկա վիճակի գնահատում, միասնական ծրագրի առաջադրում |  |   |                           |  |  |   |
| 16.  | 8.1. Համայնքներում մշակույթի տների և թանգարանների հաշվառում,   | Մշակութային կյանքի աշխուժացում, ապակենտրոնացում, առկա արժեքավոր ակտիվների պահպանում, արդիականացման նախագծերի մշակման, թանգարանների  | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 2023թ., (կիսամյակային հաշվետվություններ) | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման |

|  |   |   |                           |  |  |   |
|--|---|---|---------------------------|--|--|---|
|  | տեխնիկական վիճակի և արժեքավորության գնահատում արդիականացում                         | հաշվառման, տեխնիկական վիճակի ուսումնասիրության աշխատանքների (եզրակացությունների) ձեռքբերում՝ մրցութային գործընթացների կազմակերպման միջոցով  |                           |  |  | ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա:<br>Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ  |
| 17.  | 8.2. Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի արդիականացում | Ֆոնդային նյութերի վերականգնման լաբորատորիայի ստեղծում<br>Ֆոնդային նյութերի արխիվացում, էլեկտրոնային արխիվի ստեղծում<br>Օn-line թանգարանի ստեղծում<br>Ցուցահանդեսների, գիտաժողովների կազմակերպման ավանդույթների վերականգնում<br>Մարզերի համար պարբերական միջոցառումների ցանկի մշակում և անցկացում<br>Հասարակության համար հասանելիության բարձրացում<br>Թանգարանի գործառույթների հանրահոչակում մասնակցելիության ընդլայնում<br>Երիտասարդության շրջանում մրցույթների անցկացման ավանդույթի վերածնունդ<br>Մայրաքաղաք-մարզեր կապերի ամրապնդում, ընդլայնում<br>Մանկական/Երիտասարդական ստեղծագործական ներուժի բացահայտում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 2023թ., (կիսամյակային հաշվետվություններ) | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա:<br><br>Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ<br><br>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| Նպատակ 9. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների հստակեցում.<br>Խնդիր. Վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման միասնական կարգի ստեղծում |   |   |                           |  |  |   |
| 18.  | 9.1. ՀՀ օրենսդրությամբ քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա             | Էլեկտրոնային հայտերի միջոցով լիցենզիաների տրամադրման ուսցիռնալ, արագ և թափանցիկ գործառույթների իրականացման էլեկտրոնային հայտերի միջոցով լիցենզիաների  | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն    | 2021թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ         | Ֆինանսավորում չի պահանջվում:  |

|     |   |   |                           |   |  |  |
|-----|---|---|---------------------------|---|--|--|
|     | գործունեության տեսակների սահմանում, լիցենզիաների տրամադրման ընթացակարգի կազմում և ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:   | տրամադրման ռացիոնալ, արագ և թափանցիկ գործառույթների իրականացմանն ուղղված իրավական ակտերի մշակում:   |                           |   |  |  |
| 19. | 9.2. Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների դասակարգում ըստ ռիսկայնության աստիճանի: Քաղաքաշինական թույլատվական ընթացակարգերի համապատասխանեցում սահմանված քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների դասակարգմանը: | Լիցենզավորման գործընթացի արդյունքում պահանջարկին համապատասխան ոլորտում տնտեսվարող սուբյեկտների ձևավորում, ինչպես նաև շուկայական հարաբերությունների կարգավորում:   | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>ՀՀ կադաստրի կոմիտե<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2021թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ         | Ֆինանսավորում չի պահանջվում:   |
| 20. | 9.3. Քաղաքաշինության բնագավառում միասնական ռեեստրի ստեղծման, կառուցվածքի, վարման և մոնիթորինգի իրականացման հարթակի ստեղծում:  | Քաղաքաշինության բնագավառում միասնական ռեեստրի ստեղծման և վարման արդյունքում քաղաքաշինական գործունեության լիցենզավորում էլեկտրոնային եղանակով, դիտարկելով այն որպես էլեկտրոնային մեկ հարթակ: Լիցենզավորված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվական տվյալների ամփոփում, գործունեության մշտադիտարկում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն   | 2022թ., (կիսամյակային հաշվետվություններ) | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա: |

|   |   |   |                           |   |  | Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
|---|---|---|---------------------------|---|--|--|
| <p>Նպատակ 10. Մասնագետների որակավորման բարձրացման նպատակով քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրում, շարունակական մասնագիտական զարգացման գործառնայթի ապահովում հասարակական կազմակերպությունների, բարձրագույն կրթության հաստատությունների միջոցով որոնք կբավարարեն օրենսդրությամբ սահմանված պահանջները.</p> <p>Խնդիր. Լիցենզավորված կազմակերպությունների ռեյտինգավորման ցանկի ստեղծում</p> |   |   |                           |   |  |  |
| 21.   | 10.1. Լիցենզավորման գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ձևավորման մեթոդակարգի մշակում:  | Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների հաշվետվողականությամբ պայմանավորված, վերջիններիս նկատմամբ վերահսկողության մեխանիզմների կիրառում, ապահովելով սպառողների իրավունքների պաշտպանությունը, մարդկանց համար առողջ, անվտանգ և հարմար կենսամիջավայրերի ստեղծում.  | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Համապատասխան մարզպետարաններ Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) | 2023թ., (կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում:   |
| 22.   | 10.2. Մասնագիտական որակավորման հանրային իրազեկմանը միտված քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների ռեյտինգավորման ցանկի ստեղծում: | Կազմակերպությունների ռեյտինգավորման ցանկի ստեղծմամբ, ապրանքների և ծառայությունների որակի բարձրացում, ինչպես նաև շուկայական հարաբերությունների կարգավորում, թափանցիկության ապահովում, մասնագիտական գործունեությանն ուղղված պետական քաղաքաշինական քաղաքականության իրագործման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում, տարածքներում մասնագիտական ռեսուրսի գնահատման արդյունքում կառուցապատման հուսալիության ապահովում, թափանցիկության ապահովում, սուբյեկտիվ որոշումների բացառում, բյուրոկրատական կամայականությունների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում. | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  | 2023թ., (կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում:   |

|   |  |  |                           |  |                                    |   |
|---|--|--|---------------------------|--|------------------------------------|---|
|   |  | գործարար միջավայրի բարելավում և ներդրումների ներգրավման խթանում.   |                           |  |                                    |   |
| <p>Նպատակ 11. ԱՊՀ անդամ-պետությունների համապատասխան ոլորտներում փոխհամաձայնեցված մեթոդների, նոր հայեցակարգերի և ձեռքբերումների շուրջ քննարկումների կազմակերպում ու փորձի փոխանակում:</p> <p>Խնդիր. Քաղաքաշինության և ճարտարապետության ոլորտներում առկա խնդիրների լուծման նոր ուղիների ու քայլերի մշակում, պետությունների միջև բարեկամական կապերի ամրապնդում ինչպես նաև 1994 թվականի սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ստորագրված շինարարության ոլորտում համագործակցության Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարում:</p> |  |  |                           |  |                                    |   |
| 23.   | 11.1 ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի հերթական 42-րդ նստաշրջանի կազմակերպում:        | Շինարարության ոլորտում ԱՊՀ անդամ-պետությունների համագործակցության ընդլայնում:  | ՀՀ քաղաքաշինության կոմիտե |  | 2022 թվականի առաջին կիսամյակ       | ՀՀ պետական բյուջե<br><br>Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա: |
| 24.   | 11.2 ԱՊՀ Գործադիր Կոմիտեի կողմից 2021 թվականը ճարտարապետության և քաղաքաշինության տարի հայտարարելու շրջանակներում միջոցառումների կազմակերպում | Տարաբնակեցման բազմակետորոն համակարգի ձևավորման և աճի նոր բևեռների զարգացման միտումների ԱՊՀ երկրների ուսումնասիրություն, առաջարկների փաթեթի մշակում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե |  | 2021 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե<br><br>Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա: |
| 25.   | 11.3 ԱՊՀ Գործադիր Կոմիտեի կողմից 2021 թվականը ճարտարապետության և քաղաքաշինության տարի  | Համարժեք հետխորհրդային բնակավայրերում խոշոր արդյունաբերական հանգույցների վերափոխման կոնկրետ օրինակների քննարկում, խնդիրների, խոչընդոտների          | ՀՀ քաղաքաշինության կոմիտե |  | 2021 թվականի սեպտեմբեր             | ՀՀ պետական բյուջե<br><br>Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման  |

|   |  |  |                           |                               |   |   |
|---|--|--|---------------------------|-------------------------------|---|---|
|   | հայտարարելու շրջանակներում միջոցառումների կազմակերպում   | առանձնացում, լուծման ուղիների վերլուծություն:<br>Աղապտացման մեխանիզմների ուսումնասիրում, օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտի բարեփոխումներ, ՊՄՀ կիրառում, միասնական լուծումների ակնկալիքով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի վերանայման անհրաժեշտություն, ՀՀ տարածքների հաշվառում, խոշոր ներդրումային ծրագրերի տեղակայում նշված տարածքներին: |                           |                               |   | Ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա:                                    |
| Նպատակ 12. Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի արդիականացում Խնդիր. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի ապահովում                          |  |  |                           |                               |   |   |
| 26.   | 12.1. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (տեխնիկական կանոնակարգեր, շինարարական նորմեր, շինարարական նորմերի կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր) մշակում, վերանայում, տեղայնացում | Քաղաքաշինության բնագավառը կարգավորող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի բազայի համալրում, արդիականացում   | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն | 2021-2023թթ. (շարունակական) բյուջետային տարիների IV եռամսյակներ | ՀՀ պետական բյուջե՝ Համաձայն ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հաստատված չափաքանակների: |
| Նպատակ 13. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի սահմանում Խնդիր. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման ռեսուրսային մեթոդաբանության մշակում |  |  |                           |                               |   |   |
| 27.   | 13.1. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի մշակում   | Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման բազիսահիդեքսային մեթոդաբանությունից անցում ռեսուրսային մեթոդաբանությանը (Շինարարության գնագոյացման մեթոդաբանության արդիականացման ծրագրի Հայեցակարգի մշակում)  | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ ֆինանսների նախարարություն  | 2021 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ                          | Ֆինանսավորում չի պահանջվում :   |

|  |  |   |                           |                               |   |  |
|--|--|---|---------------------------|-------------------------------|---|--|
| Նպատակ 14. Շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրում և տեղական հումքի կիրառության ոլորտների ընդլայնում<br>Խնդիր. Նոր տեխնոլոգիաների ներդրման համար նորմատիվ փաստաթղթերի ապահովում |  |   |                           |                               |   |  |
| 28.  | 14.1. Շինարարությունում նոր տեխնոլոգիաների ներդրման և տեղական հումքի կիրառության ոլորտների ընդլայնմանը նպաստելու ուղղությամբ աջակցության ցուցաբերում | Շինարարության ոլորտում տեղական հումքի հենքի վրա նոր շինարարական նյութերի արտադրությունը խթանելու և ներդրման գործընթացն ապահովելու նպատակով մասնագիտական հարթակում քննարկումների կազմակերպում, դրանց կիրառության համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերի մշակում  | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն | 2023թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջում:  |
| Նպատակ 15. Գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների կազմակերպում<br>Խնդիր. Ապահովել շինարարական ոլորտի գիտատեխնիկական զարգացումը  |  |   |                           |                               |   |  |
| 29.  | 15.1. «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն»-ի արդիականացում  | «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության կառուցվածքում հիմնել համապատասխան գիտական և լաբորատոր ստորաբաժանումներ, վերազինել և նյութատեխնիկական բազան համալրել ժամանակակից գիտափորձարարական սարքերով ու սարքավորումներով:<br>Շինարարական գիտության զարգացումը խթանելու նպատակով համալսմբել հանրապետությունում առկա գիտական ներուժը, բարձրացնել գիտահետազոտական և փորձարարական ուսումնասիրությունների մակարդակը, ներդնել գիտական և ինժեներատեխնիկական կադրերի պատրաստման ու վերապատրաստման համակարգ՝ ապահովելու բնագավառի հեռանկարային զարգացման հնարավորությունը և գիտատեխնիկական քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացումը | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | -                             | 2023թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա:<br><br>Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ և օրենքով չարգելված այլ աղբյուրներ |



|  |   |   |                           |   |  |                             |
|--|---|---|---------------------------|---|--|-----------------------------|
| Նպատակ 16. Շենքերի ու շինությունների սեյսմակայունության ապահովում, անվտանգ շահագործման նպատակով միջոցառումների մշակում և իրականացում Խնդիր. Հայաստանի Հանրապետության տարածքում առկա սեյսմիկ ռիսկի նվազեցման և բնակչության անվտանգության ապահովման հիմնախնդրի լուծում |   |   |                           |   |  |                             |
| 30.  | 16.1. Շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում           | Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման գործընթացի կարգավորում, անձնագրերին ներկայացվող պահանջների սահմանում   | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ          | Ֆինանսավորում չի պահանջում: |
| 31.  | 16.2. Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերի և շինությունների հետագա շահագործման հետ կապված հարցերի կանոնակարգում | Շենքերի ու շինությունների կառավարման, հուսալի և անվտանգ շահագործման, սեյսմակայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացման համար՝ սեյսմակայուն շինարարության ոլորտի նորմատիվատեխնիկական դաշտի բարելավում, արդիականացում,<br>2) շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունների իրականացման և քանդման գործընթացի կանոնակարգում,<br>3) տարբեր նշանակության շենքերի և շինությունների տվյալների միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծում և վարում (տվյալների շարունակական ներառում, թարմացում)<br>2021թ առաջին կիսամյակում բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և քանդման կարգերի մշակման ապահովում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն   | 2023թ., (կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջում: |
| Նպատակ 17. Սողանքային երևույթների կանխատեսում և դրանցից պաշտպանություն Խնդիր. Սողանքային աղետից պաշտպանության ուղղությամբ հետազննությունների իրականացում և ռեժիմային դիտարկումների (մոնիտորինգ) համակարգի ստեղծում   |   |   |                           |   |  |                             |

|   |  |   |                           |   |   |                              |
|---|--|---|---------------------------|---|---|------------------------------|
| 32.   | 17.1. Առավել վտանգավոր սողանքային տեղամասերում հետազննությունների և կանխարգելիչ միջոցառումների ծրագրերի մշակում  | Կանխատեսել սողանքային երևույթների զարգացումը, բացահայտել սողանքառաջացման և ակտիվացման գործոնները, բարձրացնել հակասողանքային միջոցառումների հիմնավորվածության աստիճանը և իրականացնել արդյունավետ կանխարգելիչ միջոցառումներ   | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն   | 2023թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջում:  |
| Նպատակ 18. Բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգում<br>Խնդիր 1. Բազմաբնակարան շենքերի պահպանման, շահագործման, արդիականացման հետ կապված հարցերի կանոնակարգում |  |   |                           |   |   |                              |
| 33.   | 18.1.1 Բազմաբնակարան շենքերի պահպանման և շահագործման, արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) կանոնների հաստատում | Շենքերի (շահագործման ժամկետների երկարաձգում, հուսալիության, հարմարավետության և շահագործման սպառողական հատկանիշների բարձրացում, էներգետիկ ռեսուրսների ծախսի նվազեցում  | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2021 թվական                                 | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 34.   | 18.1.2 «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ             | Բազմաբնակարան շենքի կառավարման ոլորտում առկա խնդիրների կանոնակարգում. պետական կառավարման լիազոր մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների տարանջատում, կառավարման մեխանիզմի պարզեցում, որոշումների կայացման համար անհրաժեշտ ձայների հարաբերակցության վերանայում թեթևացում և այլն | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  | 2023թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում: |

|  |  |   |                           |   |   |                              |
|--|--|---|---------------------------|---|---|------------------------------|
| 35.  | 18.1.3 Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների սահմանում՝<br>«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում լիազորող նորմի սահմանում և դրա հիման վրա ՀՀ կառավարության որոշման ընդունում | Բազմաբնակարան շենքերի պահպանմանն ուղղված գործառույթի՝ կառավարման արդյունավետության բարձրացում   | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  | 2022թ.,<br>(կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 36.  | 18.1.4 Բազմաբնակարան շենքերի կառավարմանը, պահպանմանը և շահագործմանն ուղղվող ֆինանսական հոսքերի գործուն համակարգի (ֆոնդի) ստեղծման իրագործելիության ուսումնասիրություն և դրա հիման վրա առաջարկությունների մշակում   | Բազմաբնակարան շենքերի կառավարմանը, պահպանմանը և շահագործմանն ուղղվող ֆինանսական հոսքերի գործուն համակարգի (ֆոնդի) ներդրման համար նախադրյալների ստեղծում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2022թ<br>(կիսամյակային հաշվետվություններ)   | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| Իսնդիր 2. Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի բնակիչների վերաբնակեցման, ինչպես նաև գոյություն ունեցող բնակֆոնդի ուժեղացման-վերակառուցման հետ կապված հարցերի կանոնակարգում |  |   |                           |   |   |                              |

|   |  |  |                                  |   |   |                                     |
|---|--|--|----------------------------------|---|---|-------------------------------------|
| 37.   | <p>18.2.1 Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի բնակիչների վերաբնակեցմանն, ինչպես նաև գոյություն ունեցող բնակֆոնդի ուժեղացման-վերակառուցմանն ուղղված ծրագրերի իրականացման համար իրավական հիմքերի ստեղծում «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում լիազորող նորմի սահմանում և դրա հիման վրա ՀՀ կառավարության որոշման ընդունում</p> | <p>Ինդրի լուծման պետական քաղաքականության ուղղությունների և սկզբունքների ամրագրում, առաջնահերթությունների սահմանում</p>   | <p>ՀՀ քաղաքաշինության կոմիտե</p> | <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>ՀՀ մարզպետարաններ</p> <p>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | <p>2021-2023 թվականներ (կիսամյակային հաշվետվություններ)</p> | <p>Ֆինանսավորում չի պահանջվում:</p> |
| <p>Ինդիք 3. Բնակարանաշինության ֆինանսավորման և բնակարանային քաղաքականության ոլորտներում պետական միասնական քաղաքականության ամրագրում</p> |  |  |                                  |   |   |                                     |
| 38.   | <p>18.3.1 ՀՀ Սահմանադրությամբ Կառավարության՝ բնակարանային շինարարության հանձնառությունը խթանելու նպատակով բնակարանաշինության ֆինանսավորման և բնակարանային քաղաքականության ոլորտներում պետական միասնական քաղաքականությունը սահմանող ՀՀ կառավարության որոշման ընդունում</p>  | <p>Մարզերում բնակարանների առաջնային շուկայի խրախուսմանը, սեփական միջոցների հաշվին շուկայից բնակարան ձեռք բերելու հնարավորություն չունեցող ընտանիքների համար պատշաճ բնակարանային պայմանների հասանելիության, սոցիալական (մատչելի) բնակարանաշինության խթանմանը, բազմազավակության խրախուսմանն ուղղված նախադրյալների ստեղծում</p> | <p>ՀՀ քաղաքաշինության կոմիտե</p> | <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>   | <p>2023թ., (կիսամյակային հաշվետվություններ)</p>             | <p>Ֆինանսավորում չի պահանջվում:</p> |
| <p>Ինդիք 4. Աղետի գոտու հիմնախնդիրների կանոնակարգում</p>  |  |  |                                  |   |   |                                     |

|     |   |   |                           |  |   |   |
|-----|---|---|---------------------------|--|---|---|
| 39. | 18.4.1 Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի ավարտ  | Ծրագրի շահառու ճանաչված, սակայն ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները դեռևս չբարելավված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարում:                                      | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ Լոռու, Շիրակի, Արագածոտնի մարզպետարաններ   | 2021 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ        | ՀՀ պետական բյուջե<br><br>Համաձայն ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հաստատված չափաքանակների: |
| 40. | 18.4.2 Ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման հետ կապված հարցերի կանոնակարգման նպատակով մոտեցումների սահմանում և դրանց հիման վրա ՀՀ կառավարության համապատասխան որոշումների ընդունում | Աղետի գոտու քաղաքային բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում տեղադրված/կառուցված տարածքները ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների մասով մոտեցումների սահմանում: | ՀՀ քաղաքաշինության կոմիտե | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ Շիրակի և Լոռու մարզպետարաններ ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի քաղաքային համայնքներ (համաձայնությամբ) | 2021-2023թ., (կիսամյակային հաշվետվություններ) | Ֆինանսավորում չի պահանջվում:  |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ